ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 հուլիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

87
(3296)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԼՔԵՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն այս օրերին գտնվում է Թուրքիայում, մինչդեռ նախարարությունում շարունակում են քննարկվել սպասվող կադրային փոփոխությունները: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանն ընտրություններից հետո հայտարարել էր, թե նախարարների փոփոխություններ չեն նախատեսվում, սակայն վերադաս օղակներից ներքեւ կադրային վերադասավորումներ անպայման կլինեն: Այդ հայտարարությունից հետո արդեն մեկնարկել են փոփոխությունները: Նախօրեին հայտնի դարձավ, որ ԿԳՄՍ նախարարության երկու փոխնախարարներ հրաժեշտ տվեցին իրենց պաշտոններին, եւ, ըստ ամենայնի, նույն գործընթացը սպասվում է նաեւ առողջապահության նախարարությունում:

«Ժողովուրդ» օրաթերթի կառավարական իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ փոխնախարարի պաշտոններից կազատվեն Աստղիկ Գրիգորյանը եւ Լեւոն Հակոբյանը: Ինչ վերաբերում է Լենա Նանուշյանին, ապա մեր աղբյուրների փոխանցմամբ՝ նրա պաշտոնանկության վերաբերյալ որոշումը եւս խիստ սպասելի է՝ հաշվի առնելով նրա անցած ճանապարհը, պաշտոնավարման ընթացքում արձանագրված ձախողումները եւ այն խնդիրները, որոնք, ըստ մեր տեղեկությունների, չեն կարող անտեսվել կադրային որոշումներ կայացնելիս:

Թեմայի շուրջ պարզաբանում ստանալու նպատակով «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց առողջապահության նախարարի մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանին: Վերջինս լսեց մեր հարցերը, խոստացավ ավելի ուշ կապ հաստատել, սակայն դրանից հետո մեր հեռախոսազանգերը մնացին անպատասխան:

Ակնհայտ է, որ առողջապահության նախարարությունում կադրային գործընթացները շարունակվում են, եւ, թերեւս, հենց այդ հանգամանքով էլ պայմանավորված է գերատեսչության լռությունը:

Ռուսական կողմից արդեն շուրջ երկու ամիս շարունակվող տնտեսական ճնշումների եւ սահմանափակումների ֆոնին շարունակում է օրակարգային մնալ Հայաստան մատակարարվող բնական գազի հարցը: Առավել եւս այն բանից հետո, երբ ռուսական կողմից հնչեցին զգուշացումներ, որ որոշակի զարգացումների պարագայում չի բացառվում նույնիսկ Հայաստան գազամատակարարման ամբողջական դադարեցումը: Երեկ ԵՄ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Ապաշրջափակման համատեքստում, տրանսպորտային կապակցվածության խթանմանը զուգահեռ, կարեւորում եմ նաեւ էներգետիկ կապակցվածության ընդլայնումը, այդ թվում՝ հարեւան Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ էլեկտրահաղորդման գծերի եւ կապակցիչների կառուցումը, ինչը կարող է նպաստել ինչպես էներգետիկ անվտանգությանը, այնպես էլ կանաչ անցմանը»: Ահա այս լարված իրավիճակում «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ կառավարությունը որոշել է ստուգումներ սկսել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում: Մասնավորապես, ընկերությունում մոնիթորինգ է իրականացնում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ): «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀԾԿՀ՝ պարզելու, թե ինչ նպատակ են հետապնդում իրականացվող ստուգումները, արդյոք դրանք որեւէ առնչություն ունեն ստեղծված իրավիճակի հետ եւ ինչ փուլում են գտնվում աշխատանքները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Երեկ Ալեն Սիմոնյանը լրագրողների հետ զրույցում հայտարարեց, որ հաջորդ խորհրդարանում չի լինելու, հրաժարվելու է պատգամավորական մանդատից՝ մեկնելով հանգստի: Մարդ, որը մեկ շաբաթ առաջ առաջադրվել էր ԱԺ նախագահի թեկնածու: «Ես վարչապետի հետ քննարկել եմ, չեմ վերցնի մանդատը, չեմ գա Ազգային Ժողով: Կա կուսակցություն, կա վարչություն, եւ ես ենթարկվում եմ վարչության որոշմանը: Վարչապետի հետ հետագա քայլերը չեմ քննարկել, բայց ինձ առանց Նիկոլ Փաշինյանի քաղաքականության մեջ չեմ պատկերացնում... Ես իմ խնդրանքով որոշել եմ հանգստանալ»,- հայտարարեց Ալեն Սիմոնյանը: Նա թեեւ ակնհայտորեն նեղացած է թիմակիցներից, ամեն դեպքում այսպիսի միտք էլ հայտնեց. «Եթե վարչապետն ասի՝ մի տարի ոչինչ մի՛ արա, ես այդպես էլ կանեմ ամենայն հավանականությամբ: Խաղի կանոններն այդպիսին են»: Հիշեցնենք, որ Ալեն Սիմոնյանի թիմակիցները մինչեւ երեկ շտապում էին մեդիահարթակներով շրջանառել իրենց համար ցանկալի վարկածներ, թե ԱԺ նախագահը նշանակվելու է ՀՀ նախագահ, հետո գրվեց, որ ոչ, դառնալու է Երեւանի քաղաքապետ, այնուհետեւ, թե կարող է որեւէ նախարարական պաշտոն ստանձնել: Սակայն իրականում նա ոչ մի տեղ էլ չի գնում. հոգնած է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Որոշում եմ կայացրել հրաժարվել Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահի պաշտոնից: Այս մասին ասված է Արցախի ԱԺ նախագահի հայտարարության մեջ: «Հարգելի՛ հայրենակիցներ, երկար մտորումներից, քննարկումներից եւ վերջին օրերի խորհրդակցություններից հետո որոշում եմ կայացրել հրաժարվել Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահի պաշտոնից: Այս որոշումն ինձ համար հեշտ չի եղել: 2025 թվականի մայիսի 21-ին այս պաշտոնը չեմ ստանձնել անձնական շահից, քաղաքական հավակնությունից կամ պաշտոն ունենալու ցանկությունից ելնելով: Պաշտոնը ստանձնելու իմ նպատակը պետական ինստիտուտների պահպանման հարցը բարձիթողի վիճակում չթողնելն էր, հատկապես այն ժամանակ, երբ Արցախի պետական կառույցների շարունակականությունը, մեր ժողովրդի քաղաքական ձայնն ու իրավունքների պաշտպանությունը կանգնած էին լրջագույն վտանգի առաջ: Իմ յուրաքանչյուր որոշում եւ գործողություն ուղղված է եղել մեկ նպատակի՝ պաշտպանել Արցախի ժողովրդի իրավունքներն ու պահպանել պետականության շարունակականությունը՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված նոր իրականության պայմաններում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ»

ArmLur.am-ը զրուցել է նախկին ՆԳՆ փոխնախարար Արմեն Ղազարյանի հետ:

- Հաշվի առնելով վերջին օրերի քննարկումները, դատարանում հնչած հարցուպատասխանն ու կողմերի ներկայացրած փաստարկները՝ ի՞նչ սպասելիքներ ունեք Սահմանադրական դատարանից: Կարելի՞ է ակնկալել արդար որոշում:

- Սահմանադրական դատարանը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում: Վստահ եմ, որ դատարանը կկայացնի իրավական եւ հիմնավորված որոշում:

- Տիկին Գալյանը Սահմանադրական դատարանում ներկայացնում է ՔՊ-ի շահերը: Միաժամանակ բարձրացվել են դատավորների աշխատավարձերը: Ընդդիմությունը պնդում է, որ դա կարող է ընկալվել որպես դատավորների վրա ազդեցության փորձ: Ի՞նչ իրավական գնահատական կտաք:

- Մենք այս գործով ներգրավված ենք որպես հարակից պատասխանող: Մեր խնդիրն է ներկայացնել եւ հիմնավորել, որ Ներքին գործերի նախարարությունն իր լիազորությունների շրջանակում ընտրական գործընթացները կազմակերպել է պատշաճ ձեւով: Մեր մասնակցությունն ամբողջությամբ իրավական հարթության մեջ է: Մնացած գնահատականները քաղաքական մեկնաբանությունների ոլորտից են:

- Ի՞նչ եք ներկայացնում Սահմանադրական դատարանում որպես հարակից պատասխանող:

-Եթե կան պնդումներ, որ տեղի են ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող են ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա դրանց հիմնավորումը ներկայացնում է պատասխանող կողմը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Մենք՝ Ներքին գործերի նախարարությունը, ինչպես նաեւ Գլխավոր դատախազությունն ու Հակակոռուպցիոն կոմիտեն, ներկայացնում ենք մեր փաստարկները, որ ընտրական գործընթացները կազմակերպվել են օրենքի պահանջներին համապատասխան:

- Հաճախ նկատվում է, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի քաղաքական հայտարարություններից անմիջապես հետո իրավապահ մարմինները սկսում են գործողություններ: Ինչպե՞ս եք բացատրում այդ համընկնումները:

- Ոստիկանությունը գործում է բացառապես օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում: Եթե առկա են իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ, այն պարտավոր է արձագանքել՝ անկախ քաղաքական հայտարարություններից:

- Սակայն հասարակության մի մասի կարծիքով ոստիկանությունը չափազանց մեծ ուշադրություն է դարձնում քաղաքական գործերին, մինչդեռ առօրյա հանցագործությունների, վենդետաների եւ ինքնադատաստանի դեպքերի նկատմամբ երբեմն բավարար արձագանք չի լինում: Ինչպե՞ս կմեկնաբանեք:

- Ես համաձայն չեմ այդ գնահատականի հետ: Ձեր ներկայացրած թեզը չի հաստատվում պաշտոնական վիճակագրությամբ: Հանցավորության շարժընթացի տվյալները ցույց են տալիս, որ վերջին շրջանում հանցավորության նվազման միտում կա:

- Սակայն քաղաքացիները հաճախ ասում են, որ իրական կյանքում այլ պատկեր են տեսնում:

- Դա հասկանալի է: Երբ մարդիկ առնչվում են առանձին աղմկահարույց դեպքերի, կարող է ստեղծվել տպավորություն, թե նման դեպքերը շատացել են: Օրինակ՝ եթե իմ փողոցում երկու գողություն տեղի ունենա, ինձ կարող է թվալ, թե ամբողջ երկրում գողություններն աճել են: Սակայն ընդհանուր պատկերը գնահատվում է պաշտոնական վիճակագրությամբ, եւ այդ տվյալները ներկայումս վկայում են հանցավորության նվազման միտումների մասին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՄԻԱՅՆ ԽՈՍՔԵՐ ՉԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կառավարությունում հյուրընկալել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենին:

Նախ տեղի է ունեցել ՀՀ վարչապետի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահի առանձնազրույցը, որին հաջորդել է ընդլայնված կազմերով հանդիպումը:

Իր խոսքում վարչապետը ողջունել է Ուրսուլա ֆոն դեր Լայենի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան եւ հիշեցրել, որ վերջին երկու ամսում սա նրա երկրորդ այցն է Հայաստանի Հանրապետություն: Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ այդ գործընթացը նշանակում է, որ վերջին տարիներին համատեղ ընդունված հայտարարությունները միայն խոսքեր չեն, այլ՝ կոնկրետ գործեր, որոնք Հայաստանն ու ԵՄ-ն իրականացնում են:

«Մայիսին տեղի ունեցավ Հայաստան-Եվրամիություն առաջին գագաթնաժողովը Երեւանում եւ կարծում եմ՝ շատ տպավորիչ է, թե ինչպիսի քայլերով ենք մենք իրականացնում այն քաղաքական պայմանավորվածությունները, որոնք ձեռք ենք բերել:

Հայտնի հանգամանքները նաեւ նպաստում են, որպեսզի որոշ պրոցեսներ մեր հարաբերություններում ավելի արագ ընթանան, բայց մյուս կողմից այն, ինչ մենք իրականացնում ենք, մեր ռազմավարական ընկալումների արտահայտությունն է, որն արձանագրել ենք նախորդ շրջանում մեր ունեցած, արդեն թույլ տվեք ասել, բազմաթիվ հանդիպումների եւ քննարկումների ընթացքում»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը շնորհակալություն է հայտնել այս ընթացքում ցուցաբերված աջակցության համար: «Մենք վերջին ամիսներին տարբեր ձեւաչափերով ենք շփվել, այդ թվում՝ հեռախոսազրույց ենք ունեցել, այդ հեռախոսազրույցի ընթացքում Դուք մի շարք հայտարարություններ եք արել Հայաստանին աջակցության վերաբերյալ, որոնք գործնականում այսօր իրագործվում են կամ իրագործված են: Իհարկե, դա շատ տպավորիչ է, եւ նաեւ հանրության շրջանում մեծացնում է վստահության մակարդակը Հայաստան-Եվրոպական Միություն գործակցության եւ գործընկերության նկատմամբ: Եվս մեկ անգամ ողջունում եմ Ձեզ եւ բարով եք եկել»,- նշել է վարչապետ Փաշինյանը:

Ուրսուլա ֆոն դեր Լայենը շնորհակալություն է հայտնել ջերմ հյուրընկալության համար եւ նշել. «Սիրելի Նիկոլ, լավ է նորից վերադառնալ Երեւան, սա արդեն երկրորդ անգամ է երկու ամսից պակաս ժամկետում, ինչպես ասացիք, եւ սա ապացուցում է մեր գործընկերության եւ անձնական բարեկամության ամրությունը: Նախ՝ կցանկանայի Ձեզ շնորհավորել ընտրությունների արդյունքների առթիվ, ուզում եմ շնորհավորել հայ ժողովրդին, ով ընտրել է ժողովրդավարությունը, խաղաղությունը եւ Եվրոպային մերձենալը»,- ասել է Եվրոպական հանձնաժողովի նախագահը՝ ավելացնելով, որ սա մեծ քայլ է եւ վստահության քվե:

Ուրսուլա ֆոն դեր Լայենի խոսքով՝ ինքը գիտակցում է այն փաստը, որ ոչ բոլորին է դուր գալիս Հայաստան-ԵՄ մերձեցումը եւ ընդգծել ԵՄ-ի՝ Հայաստանին անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու պատրաստակամությունը: «Ես այսօր այստեղ եմ նաեւ աներկբա հայտարարելու, որ եթե Ռուսաստանը փակի իր շուկան Հայաստանի արտադրանքի համար, Եվրոպական միությունը կբացի դուռը հայկական ապրանքների արտադրատեսակների համար՝ Եվրոպական միության 50 միլիոնանոց սպառողների շուկայում: Մենք ուզում ենք սատարել մեր բարեկամներին, մենք ուզում ենք սատարել խաղաղության պրոցեսին, որն ընթանում է, ինչի համար ցանկանում եմ գնահատանք հայտնել Ձեզ: Մենք ուզում ենք նաեւ ներդրումներ իրականացնել փոխկապակցվածության ծրագրերի մեջ, որոնք կապում են Եվրոպական միությանը, Հարավային Կովկասը եւ Կենտրոնական Ասիան: Հայաստանն այստեղ կենսական դեր է խաղում՝ շնորհիվ իր դիրքի»,- ասել է Եվրոպական հանձնաժողովի նախագահը՝ ավելացնելով, որ այդ ներդրումների նպատակով հատկացվել է 200 միլիոն եվրո, որը կարող է հասնել մինչեւ 2 մլրդ եվրոյի: «Սրանք կարեւոր են այս տարածաշրջանում փոխկապակցվածության համար»,- ասել է Եվրոպական հանձնաժողովի նախագահը՝ շնորհակալություն հայտնելով կայուն գործընկերության եւ բարեկամության համար:

Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Եվրոպական հարաբերությունների հետեւողական զարգացմանն առնչվող օրակարգային մի շարք հարցեր: Դրանք վերաբերել են առեւտրատնտեսական կապերի ընդլայնմանը, Հայաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումների առաջմղմանը, վիզաների ազատականացման գործընթացին: Մտքեր են փոխանակվել նաեւ տարածաշրջանային նշանակության այլ թեմաների շուրջ:

ԿՏԵՂԱԴՐՎԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԸ

Ներկայումս Հայաստանում բացակայում է իրավական կարգավորում, որով պարտադիր կսահմանվեր Հայաստանի Հանրապետության պետական դրոշի տեղադրումը բոլոր բնակավայրերի մուտքերում: Գործնականում որոշ համայնքներում պետական դրոշներ տեղադրված են համայնքային նախաձեռնությամբ, սակայն միասնական մոտեցում եւ պարտադիր պահանջ գոյություն չունի: Արդյունքում, բազմաթիվ բնակավայրերի մուտքերում պետական դրոշը բացակայում է կամ գտնվում է ոչ պատշաճ վիճակում, ինչը չի ապահովում պետական խորհրդանիշների լիարժեք եւ համաչափ ներկայացվածությունը ՀՀ ամբողջ տարածքում: Այս մասին հուլիսի 2-ին հրավիրված ԱԺ արտահերթ նստաշրջանի ընթացքում ասել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ալխաս Ղազարյանը՝ առաջին ընթերցմամբ զեկուցելով իր եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի համահեղինակած ««Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Նախագծի համահեղինակը նշել է նաեւ, որ ՀՀ պետական դրոշը պետականության, ինքնիշխանության եւ ազգային արժանապատվության կարեւորագույն խորհրդանիշներից է, ու հավելել, որ նախագծով ամրագրվում է պարտադիր պայման՝ ՀՀ համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերում պետք է տեղադրված լինի պետական դրոշ, որի առկայությունը կուժեղացնի ազգային ինքնագիտակցությունը, կստեղծի միասնական պետական միջավայր, կունենա կրթական եւ դաստիարակչական նշանակություն, կխթանի պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքը քաղաքացիների եւ այցելուների շրջանում:

Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը ներկայացրել է հանձնաժողովի անդամ Անուշ Քլոյանը:

Կառավարության դիրքորոշումը ներկայացրել է ՏԿԵ նախարարի տեղակալ Առնակ Ավետիսյանը: Գերատեսչության ներկայացուցիչը տեղեկացրել է, որ նախագիծը լրամշակվել է Կառավարության առաջարկների հիման վրա, ուստի գործադիրը դրան տվել է դրական եզրակացություն:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Հուլիսի 2-ին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի դիվանագիտական խորհրդական Սայմոն Մորդյուին: Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Եվրոպական միություն երկկողմ հարաբերությունների զարգացման ընթացքը՝ անդրադառնալով գործընկերության օրակարգի առաջնահերթություններին: Մասնավորապես, ընդգծվել է էներգետիկայի ոլորտում եւ առեւտրատնտեսական կապերի ընդլայնման հարցի շրջանակում համագործակցության խորացման կարեւորությունը: Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային եւ միջազգային անվտանգության իրավիճակի շուրջ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԺՇԿԻ ԿԵՐՊԱՐՈՒՄ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հրապարակել է նեյրոնային ցանցերի միջոցով ստեղծված տեսանյութ, որտեղ ներկայանում է որպես բժիշկ եւ իր քաղաքականության հակառակորդներին, այդ թվում՝ հոլիվուդյան աստղերին, առաջարկում է «Թրամփի խանգարման համախտանիշի» բուժման ծրագիր: «Ձեզ կամ ձեր ծանոթներից որեւէ մեկին ախտորոշվե՞լ է TDS (Թրամփի խանգարման համախտանիշ): Ախտանիշները կարող են անողոք լինել: Բարեբախտաբար, ես՝ բժիշկ Թրամփս, ունեմ բուժման ծրագիր», - ասում է ամերիկացի նախագահը: Տեսանյութը հրապարակվել է Truth Social-ում:

ՈՒԿՐԱԻՆԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ ՉՈՒՆԻ

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն հայտարարել է, որ Ուկրաինան ներկայումս Հյուսիսատլանտյան դաշինքին միանալու հեռանկարներ չունի:

«Այս պահին միաձայն աջակցություն չկա, եւ դա անհրաժեշտ է լիարժեք անդամակցության համար: Միացյալ Նահանգները, ինչպես նաեւ Գերմանիան եւ ՆԱՏՕ-ի մյուս անդամ պետությունները դեմ են Ուկրաինայի անդամակցությանը. ներկայումս հեռանկարներ չկան», - ասել է Ռյուտեն գերմանական Handelsblatt-ին տված հարցազրույցում:

Մայիսին ՆԱՏՕ-ի նախկին գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը առաջարկեց Ուկրաինային ընդունել դաշինք՝ հետեւելով 1955 թվականին Արեւմտյան Գերմանիայի դեպքում օգտագործված մոդելին:

ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԲԱՐԵԼ ՆԱՎԹԸ՝ ՏԱՆԿԵՐՆԵՐՈՒՄ

Մինչեւ 68 միլիոն բարել իրանական նավթ մնում է ծովում գտնվող տանկերների վրա, մինչդեռ Իրանը ակտիվորեն գնորդներ է փնտրում ԱՄՆ պատժամիջոցներից ազատման ժամանակահատվածում, հաղորդում է Bloomberg-ը: Հունիսի 22-ին ԱՄՆ ֆինանսների նախարարության արտասահմանյան ակտիվների վերահսկողության գրասենյակը (OFAC) տրամադրել է ընդհանուր լիցենզիա, որը թույլատրում է իրանական նավթի եւ նավթամթերքի արտադրության, վաճառքի, մատակարարման եւ բեռնաթափման հետ կապված գործողություններ մինչեւ օգոստոսի 21-ը: «Իրանական նավթի ընդհանուր ծավալը ծովում՝ թե՛ տարանցիկ, թե՛ հանգստի վիճակում, տատանվում է 58-ից 68 միլիոն բարելի սահմաններում», - գրում է գործակալությունը՝ հղում անելով Vortexa վերլուծական ընկերության տվյալներին եւ սեփական հաշվարկներին: Գործակալությունը նշում է, որ Իրանը փորձում է գնորդներ գտնել իր նավթի համար՝ մինչեւ Վաշինգտոնի կողմից տրված 60-օրյա ժամկետի լրանալը:

ԱՋԱՏՎԵԼ Է

Ի՞ՆՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՈՒՆԻ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այսօրվա՝ հուլիսի 1-ի որոշումներով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալներ Հասմիկ Ավագյանն ու Դանիել Դանիելյանն ազատվել են իրենց զբաղեցրած պաշտոններից: Պաշտոնից ազատվելուց հետո Հասմիկ Ավագյանը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ ինքն է դիմել վարչապետին՝ ազատման խնդրանքով, եւ հեռանում է գլուխը բարձր, իր կատարած աշխատանքի եւ խղճի առաջ պատասխանատու լինելու զգացումով:

Իր հայտարարության մեջ Ավագյանը, մասնավորապես, նշել է, որ շնորհակալություն է հայտնել վարչապետին վստահության, համատեղ աշխատանքի եւ հայրենիքին ծառայելու բացառիկ հնարավորության համար՝ այդ ժամանակահատվածը որակելով պատասխանատվության, ծառայության, փորձությունների ու կարեւոր ձեռքբերումների ճանապարհ: Նա երախտագիտություն է հայտնել բոլոր նրանց, ում հետ հնարավորություն է ունեցել քննարկելու, ստեղծելու եւ առաջ շարժվելու՝ հանուն երկրի եւ հայկական սպորտի առողջացման: Նախկին փոխնախարարն ընդգծել է, որ ցանկացած պաշտոն ժամանակավոր է, իսկ արժեքները, սկզբունքներն ու մարդկային արժանապատվությունը՝ մնայուն, եւ հավելել, որ որոշ ճանապարհներ ավարտվում են ոչ թե սպառվելու պատճառով, այլ որովհետեւ ժամանակն է սկսելու նորը: Նա նաեւ վստահեցրել է, որ անկախ զբաղեցրած պաշտոնից, շարունակելու է ծառայել Հայաստանի Հանրապետությանը նույն պատասխանատվությամբ, սկզբունքներով ու նվիրումով:

Հատկանշական է, որ Հասմիկ Ավագյանի պաշտոնեավարումը բավականին կարճ տեւեց. նա ԿԳՄՍ նախարարի տեղակալի պաշտոնին նշանակվել էր 2025 թվականի մարտի 24-ին: Երեւանում ծնված Ավագյանն ունի հարուստ գիտամանկավարժական կենսագրություն: Նա 2004-2008 թվականներին սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի բակալավրիատում՝ ստանալով ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի եւ աթլետիկայի մարզչի որակավորում, ինչից հետո՝ 2009-2010 թվականներին, ավարտել է նույն բուհի մագիստրատուրան՝ ադապտացված ֆիզիկական կուլտուրա առողջական շեղում ունեցող անձանց համար մասնագիտությամբ: 2018 թվականին նրան շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան, իսկ 2020 թվականին՝ դոցենտի գիտական կոչում: Իր կարիերան սկսելով 2009 թվականին որպես նույն բուհի լաբորանտ, ապա դասախոս, նա 2020-2024 թվականներին զբաղեցրել է Հասարակական եւ հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ մինչ փոխնախարար նշանակվելը եղել է նույն ինստիտուտի ուսումնագիտական գծով պրոռեկտորը:

ArmLur.am-ը փորձել է պարզել, թե այս պաշտոնավարման ընթացքում ինչ չափով է փոխվել կամ ավելացել նախկին փոխնախարարի ունեցվածքը՝ համադրելով նրա՝ պաշտոնն ստանձնելու օրվա դրությամբ ներկայացված հայտարարագիրը եւ 2025 թվականի տարեկան հայտարարագիրը: Ուշագրավ է, որ երկու փաստաթղթերում էլ նա սեփականության իրավունքով իրեն պատկանող որեւէ անշարժ գույք, արժեթղթեր, բանկային ավանդներ կամ 4 միլիոն դրամը գերազանցող թանկարժեք գույք չի ներկայացրել, թեեւ պաշտոնն ստանձնելիս նշել էր, որ 90 օրից ավելի փաստացի տիրապետել է 2018 թվականի թողարկման CHEVROLET մակնիշի ավտոմեքենա:

Ինչ վերաբերում է ֆինանսական միջոցների համեմատությանը, ապա պաշտոնն ստանձնելու դրությամբ (մինչեւ 2025 թ. մարտի 24-ը) Հասմիկ Ավագյանի ստացած ընդհանուր եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում կազմել էր 2,772,302 ՀՀ դրամ, որից 306,554-ը ստացվել էր ԿԳՄՍ նախարարությունից, իսկ մնացածը՝ Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտից (2,345,748 դրամ աշխատավարձ եւ 120,000 դրամ պայմանագրային եկամուտ): Սակայն 2025 թվականի տարեկան հայտարարագրով նրա ընդհանուր եկամուտը կտրուկ աճել է՝ կազմելով ավելի քան 20 միլիոն ՀՀ դրամ, որի մեծ մասը՝ 15,173,465 ՀՀ դրամը, ստացվել է հենց ԿԳՄՍ նախարարությունից որպես աշխատանքի վարձատրություն, իսկ մյուս մասը ձեւավորվել է բուհական հիմնադրամից ստացված 3,634,881 ՀՀ դրամ աշխատավարձից եւ 1,200,000 ՀՀ դրամ քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից:

Դրամական միջոցների պատկերը, սակայն, հակառակ դինամիկան ունի. եթե պաշտոնն ստանձնելու դրությամբ փոխնախարարի սեփական կանխիկ դրամական միջոցները կազմել էին 9,000,000 ՀՀ դրամ, բանկային հաշիվների մնացորդը՝ 660,000 ՀՀ դրամ, եւ առկա էր երրորդ անձին պատկանող, բայց իր կողմից տնօրինվող եւս 660,000 ՀՀ դրամ կանխիկ միջոց, ապա տարեկան հայտարարագրում նշվում է, որ տարվա սկզբին բանկային հաշիվներին եւ անձնական կանխիկում մնացորդներ չեն եղել: Փոխարենը տարեվերջի դրությամբ նրա անձնական կանխիկ դրամական միջոցները կազմել են ընդամենը 355,000 ՀՀ դրամ, բանկային հաշիվների մնացորդները եղել են չնչին՝ համապատասխանաբար 686 դրամ եւ 325,473 դրամ, իսկ երրորդ անձին պատկանող, բայց իր անունից տնօրինվող կանխիկ միջոցները տարվա սկզբի 460,000 դրամից տարեվերջին նվազել եւ կազմել են 275,000 դրամ: Այսպիսով, պաշտոնավարման ընթացքում Հասմիկ Ավագյանի եկամուտները թեեւ էականորեն ավելացել են նախարարական բարձր աշխատավարձի հաշվին, սակայն նրա անձնական կանխիկ եւ բանկային խնայողությունները, պաշտոնն ստանձնելու սկզբնական շրջանի համեմատ, զգալիորեն նվազել ու պակասել են:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ՆԱՎԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

Վրաստանի արեւմտյան հատվածում՝ Սեւ ծովի ափին գտնվող Կուլեւիի նավթավերամշակման գործարանը մոտակա ամիսներին ամբողջությամբ կհրաժարվի ռուսական ծագման նավթի վերամշակումից: Այդ մասին հայտարարել է գործարանը կառավարող Black Sea Petroleum ընկերությունը:

Ընկերության հայտարարության համաձայն՝ 2026 թվականի օգոստոս-սեպտեմբերից սկսած գործարանը կմշակի բացառապես ոչ ռուսական ծագման նավթ: Ըստ օպերատորի՝ այս քայլը հնարավորություն կտա ընկերության արտադրանքն արտահանել ավելի բարձր եկամտաբեր շուկաներ:

Black Sea Petroleum-ի տվյալներով՝ 2026 թվականի առաջին կիսամյակում գործարանը վերամշակել է ավելի քան 650 հազար տոննա հում նավթ: Ընկերությունը նաեւ նախատեսում է 2027 թվականի առաջին եռամսյակից սկսել ճանապարհային բիտումի արտադրությունը՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաների համար, իսկ նույն տարվա երկրորդ եռամսյակից՝ ավիացիոն վառելիքի արտադրությունը:

Միաժամանակ ընկերությունը հայտարարել է ամերիկյան Honeywell արդյունաբերական կոնգլոմերատի հետ համագործակցության ընդլայնման մասին: Եթե նախկինում համագործակցությունը սահմանափակվում էր ինժեներական եւ լիցենզավորման համաձայնագրերով, ապա այժմ այն ներառում է նաեւ սարքավորումների մատակարարում եւ արտադրության ավտոմատացված կառավարման համակարգերի ներդրում:

Հիշեցնենք, որ 2026 թվականի սկզբին Եվրոպական միությունը քննարկում էր երրորդ երկրների մի շարք նավահանգիստների, այդ թվում՝ Կուլեւիի տերմինալի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու հնարավորությունը՝ ռուսական նավթի հետ իրականացվող գործարքների պատճառով: Սակայն հետագայում Կուլեւիի նավթավերամշակման գործարանը դուրս է մնացել ԵՄ պատժամիջոցների նախագծային ցանկից:

Կուլեւիի նավթավերամշակման գործարանը շահագործման է հանձնվել 2024 թվականի վերջին եւ համարվում է Վրաստանի խոշորագույն արդյունաբերական նախագծերից մեկը: Այն իրականացվում է Վրաստանի պետական զարգացման հիմնադրամի եւ իշխող «Վրացական երազանք» կուսակցության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլիին պատկանող Cartu Bank-ի մասնակցությամբ: Նախագծի առաջին փուլը նախատեսում է տարեկան մինչեւ 1,2 միլիոն տոննա նավթի վերամշակում, հետագայում հզորությունը հասցնելով 4 միլիոն տոննայի: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է շուրջ 600 միլիոն ԱՄՆ դոլար:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ԹԵԺ Է ԼԻՆԵԼՈՒ

Այսօր՝ հուլիսի 3-ին, տեղի է ունենալու դատավորների ընդհանուր ժողովը, որի կենտրոնական հարցն է դատավորների Էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովի ոչ դատավոր 3 անդամի ընտրությունը: Մինչ օրենսդրական փոփոխությունները, հանձնաժողովը կազմված էր 6 դատավոր եւ 2 ոչ դատավոր անդամից, բայց քաղհասարակության պահանջով ոչ դատավոր անդամների թիվն ավելացավ երեքով: Եւ այն այսուհետ գործելու է 11 անդամի կազմով:

Փոփոխությունների նպատակն էր մեծացնել ՀԿ-ների տեղը եւ վերացնել դատական կորպորատիվիզմի ռիսկերը: Ի սկզբանե թեկնածության հայտ ներկայացրել էր 8 իրավաբան: Սակայն նախորդ շաբաթ ամենախնդրահարույց թեկնածուներից մեկը՝ նախկին դատավոր Արթուր Մկրտչյանը, հանել է իր թեկնածությունը:

Արթուր Մկրտչյանը հայտնի է եղել մի շարք աղմկահարույց գործերով: Նա կայացրել էր Հաց բերողի երկրորդ կալանքի որոշումը: Ի դեպ, ներկայում Հաց բերողի՝ Արթուր Սարգսյանի վերաբերյալ դիմումը քննվում է ՄԻԵԴ-ում, եւ եթե այն բավարարվի, իսկ Արթուր Մկրտչյանը մնար թեկնածուների կազմում, ապա կստացվեր, որ մարդու իրավունքների խախտումներ կատարած դատավորը որոշում է այլ դատավորներին կարգապահական պատասխանատվության հարուցման հարցերը:

Մկրտչյանը քննել է նաեւ ՊԵԿ նախկին նախագահ, ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի եւ նրա եղբորորդու վերաբերյալ քրեական գործը, սակայն ավարտին չի հասցրել: 2018 թվականին բավարարել է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին կալանավորելու վերաբերյալ ՀՔԾ միջնորդությունը, խափանման միջոցներ է քննարկել Մանվել Գրիգորյանի եւ նրա կնոջ գործերով: Սակայն Արթուր Մկրտչյանի թեկնածության հետևանքը առկա կասկածներն ու մտահոգությունները չեն փարատում: Քանի որ թեկնածուների մեջ իրական ՀԿ-ների ներկայացուցիչների թիվը դեռեւս քիչ է, եւ ըստ ներքին խոսակցություններին՝ ՀԿ-ների անդամները շանս չունեն, քանի որ դատավորները նախապատվությունը այս անգամ էլ կտան իրենց հետ կապված անձանց: Այս մտահոգությունը բացատրվում է նրանով, որ թեկնածուների մեջ են նախկին դատավորներ, օրինակ՝ Արմինե Թումասյանը:

Վերջինս Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի նախկին դատավոր է եղել: Նա դատավոր է նշանակվել 2023-ին եւ հրաժարականի դիմում է ներկայացրել մոտ 1 տարի առաջ: Թումասյանի հրաժարականի վերաբերյալ ԲԴԽ օգոստոսի 4-ի որոշումից հետեւում է, որ պատճառը գերծանրաբեռնվածությունն է եղել, որին նա, փաստորեն, չի դիմացել: Մամուլում մի պահ շրջանառվեց, որ նրա դեմ կարգապահական վարույթ էր հասունանում, եւ այդ պատճառով է նա հրաժարվել դատավորի պաշտոնից: Հասկանալի չէ, թե այս պարագայում ինչպես նա պետք է գնահատի նմանատիպ ծանրաբեռնվածությամբ աշխատող դատավորներին:

Թեկնածուների մեջ է նաեւ վճռաբեկ դատարանի աշխատակից Մելիք Մելիքյանը: Հարց է ծագում՝ ինչպես է իրավաբանը մի կողմից շարունակելու աշխատել դատական համակարգում, մյուս կողմից գնահատելու դատավորների էթիկան:

Սակայն խնդիրները այսքանով չեն սահմանափակվում. թեկնածուների մեջ է նաեւ Արտակ Մալխասյանը, ով ո՛չ իրավապաշտպան դաշտում, ո՛չ դատական համակարգում որեւէ հետագիծ չունի: Այս առնչությամբ էլ հարց է ծագում, թե ինչպես պետք է դատական համակարգի հետ որեւէ կապ չունեցող անձը գնահատի դատավորներին հատկապես այն դեպքում, երբ կապվում է ոստիկանության եւ այլ ուժային մարմինների հետ: Հատկանշական է, որ այս 3 թեկնածուներից եւ ոչ մեկը կապ չունի ո՛չ առաջադրած ՀԿ-ի, ո՛չ իրավապաշտպան գործունեության հետ:

Կրկին հարց է ծագում՝ արդյոք նման դասավորվածությամբ արհեստական ներկայացվածությունը ունակ է օբյեկտիվ եւ ազնիվ եղանակով գնահատել դատավորներին եւ ապահովել հանձնաժողովի անկախ գործունեությունը: Թեկնածուների մեջ են նաեւ այլ ՀԿ ներկայացուցիչներ: Մասնավորապես, առաջադրված է նաեւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից թեկնածուն, կառույցը ավելի հայտնի է իր նախագահով, ով Արթուր Սաքունցն է:

Թեկնածուների մեջ է նաեւ Հասմիկ Հարությունյանը, ով ներկայացնում է Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ն, չնայած թեկնածուն ակտիվ է ոլորտում, սակայն Հարությունյանի նախորդ երկու առաջադրումները անհաջող են եղել եւ Ժողովը վերջինիս թեկնածությունը մերժել է: Թեկանծուների մեջ է նաեւ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կոմիտե»-ի ներկայացուցիչ Անուշ Մկրտչյանը. ո՛չ կառույցը, ո՛չ թեկնածուն դատական համակարգում առանձնապես ակտիվ չեն եղել: Թեկնածուների մեջ է նաեւ իրավաբան Լուսինե Հակոբյանը, ով ներկայացնում է «Իրավունքի Եվրոպա» ՀԿ-ն. վերջինս առավել ակտիվ է եղել Հայաստան-ԵՄ հարցերով եւ եվրոպամետ կուսակցությունների հետ իր ակտիվ գործունեությամբ:

Թե ինչ մոտիվ ունեն ՀԿ ներկայացուցիչները չենք կարող ասել, սակայն այս եւ մի շարք այլ կարեւոր հարցեր պետք է առաջին հերթին հենց դատավորներին հետաքրքրեն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՎԱՐԱՐԵԼ Է ՀԱՅՑԸ

Փաստաբան Արա Զոհրաբյանը գրում է. «Վարչական դատարանը բավարարել է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու հայցը Հովհաննավանքի գործով: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (դատավոր՝ Վարազդատ Միքաելյան) այսօր՝ 01.07.2026թ., բավարարել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայցն ընդդեմ ՆԳՆ ոստիկանության: Գործը վերաբերում էր Արագածոտնի մարզի Սուրբ Հովհաննավանքին, որտեղ կարգալույծ հռչակված Ստեփան Ասատրյանի կողմից եկեղեցու Սուրբ Խորան, Ավանդատուն եւ Ատյան մուտք գործելու եւ ծիսական գործողություններ իրականացնելու վտանգի մասին Եկեղեցին նախապես դիմել էր ոստիկանությանը՝ պահանջելով ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշմամբ նախատեսված կարգով կանխել ներխուժումը եւ իրականացնել վտարման գործողություններ:

Ոստիկանությունը հրաժարվել էր կատարել օրենքով սահմանված գործողությունները՝ նույնիսկ չներկայանալով դեպքի վայր եւ չիրականացնելով կառավարության որոշմամբ նախատեսված ստուգողական միջոցառումները: Դատարանը հստակ արձանագրել է, որ ոստիկանությունը պարտավոր էր ոչ թե անտեսել Մայր Աթոռի դիմումները, այլ օրենքով սահմանված կարգով ժամանել դեպքի վայր, ուսումնասիրել ներկայացված փաստաթղթերը եւ կատարել այն գործողությունները, որոնք նախատեսված են սեփականության իրավունքի պաշտպանության համար:

Վճռի կարեւորագույն իրավական հետեւությունն այն է, որ թեեւ եկեղեցին բաց է հավատացյալների համար, սակայն դրա բոլոր հատվածները չունեն նույն իրավական կարգավիճակը: Խորանը, Ատյանը եւ Ավանդատունը բացառապես եկեղեցական ծառայության համար նախատեսված տարածքներ են:

Դատարանն արձանագրել է նաեւ, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ճանաչվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում, իսկ «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքից բխում է, որ Եկեղեցին, օրենքով սահմանված շրջանակներում, ինքնուրույն կազմակերպում է իր ներքին կյանքը եւ իրականացնում իր կանոնական լիազորությունները:

Ըստ վարչական դատարանի՝ նշված իրավակարգավորումներից հետեւում է, որ եկեղեցու ներքին կազմակերպման, եկեղեցական ծառայության իրականացման, ինչպես նաեւ եկեղեցու պաշտամունքային տարածքների օգտագործման կարգի սահմանումն ու դրանցում գտնվելու իրավասություն ունեցող անձանց շրջանակի որոշումը վերապահված է բացառապես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավասու մարմիններին:

Վճռով դատարանը ոչ իրավաչափ է ճանաչել ոստիկանության անգործությունը»:

ԼՈՒՐԵՐ

ԹՄՐԱՄԻՋՈՑ ՊԱՀԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողները հունիսի 28-ին՝ ժամը 22.40-ի սահմաններում, Չարբախի գերեզմանատան մոտից թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածով ձերբակալել եւ բաժին են ներկայացրել 23 եւ 26 ամյա երիտասարդների: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է դեղնականաչավուն զանգվածով 2 փաթեթ՝ 4,3 գրամ քաշով: Ըստ վերջիններ՝ փաթեթում մարիխուանա է՝ անձնական օգտագործման համար: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժին: Պարեկային ծառայողները հունիսի 29-ին՝ ժամը 01.25-ին, Շենգավիթ վարչական շրջանի մեկ այլ հասցեից ձերբակալել եւ բաժին են ներկայացրել 39-ամյա տղամարդու, ում խուզարկությամբ հայտնաբերվել է դեղնականաչավուն զանգվածով 1 փաթեթ՝1,8 գրամ քաշով եւ մոխրացած հետքերով 1 կաթոցիչ: Ըստ տղամարդու՝ փաթեթում մարիխուանա է՝ անձնական օգտագործման համար: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժին: Նույն օրը՝ ժամը 21.00-ին, Պարեկային ծառայողները Արցախի փողոցից թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածով ձերբակալել եւ բաժին են ներկայացրել 39-ամյա մի տղամարդու, ում անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մոխրացած հետքերով ապակյա կաթոցիչ: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են քննչական բաժին:

ՆՈՐ ԿԱՅՔ

Եվրոպացի դատախազների երկխոսության հայկական հարթակի շրջանակում անցկացվող միջազգային համաժողովի շրջանակում այսօր ներկայացվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության նոր պաշտոնական կայքը: Գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանի խոսքով՝ կայքի գործարկումը ՀՀ գլխավոր դատախազության թվային վերափոխման կարեւոր քայլերից մեկն է եւ միտված է հանրության, մասնագիտական համայնքի եւ միջազգային գործընկերների համար առավել բաց, մատչելի եւ ժամանակակից հաղորդակցային միջավայրի ձեւավորմանը: Դատախազության կայքը մշակվել է՝ հաշվի առնելով տեղեկատվության մատչելիության, օգտագործման հարմարավետության եւ տեղեկատվական անվտանգության միջազգային լավագույն չափանիշները: Կայքը հնարավորություն է տալիս օգտատերերին հեշտությամբ ծանոթանալ Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությանը, կառուցվածքին, իրավասություններին, պաշտոնական հաղորդագրություններին, տեսանյութերին, լուսանկարներին, իրավական ակտերին, մրցույթների վերաբերյալ հայտարարություններին եւ հանրության համար նախատեսված այլ կարեւոր տեղեկություններին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կայքի մատչելիությանը: Այն համապատասխանում է Web Content Accessibility Guidelines (WCAG) միջազգային չափանիշներին:

● *Հանրապետությունում հուլիսի 1-2-ը բացահայտվել է 3 դեպք՝ շորթման, կանխամտածված սնանկության, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻՄԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Բարեկամավանը Տավուշի մարզի սահմանամերձ, ամենահեռավոր գյուղերից է: Խորհրդային տարիներին եւ հատկապես Հայաստանի անկախանալուց հետո Բարեկամավանից մեծ չափերով արտագաղթ է եղել, գյուղից հեռացածների մի մասը հաստատվել է Հայաստանում, մնացածները հեռացել են արտերկիր: Բարեկամավանում կյանքի պայմանները դժվարին են: Գյուղը ոռոգման ջուր չունի, խմելու ջուրն էլ շաբաթական 1-2 անգամ է մատակարարվում, այն մղվում է արտեզյան հորից, այդ ջուրը վատորակ է: Բարեկամավանի ամենաբերրի հողերը գտնվում են Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ կամ այդ զինուժի թիրախում, որի հետեւանքով դրանք չեն մշակվում: Գյուղի խոտհարքների, արոտավայրերի զգալի մասը նույնպես սահմանագոտում է, չի օգտագործվում: Այդ պատճառով շատ կարեւոր է Բարեկամավանում խոտհունձն արդյունավետ կազմակերպելը:

Բարեկամավանի բնակիչ Գագիկ Մեհրաբյանը Փեյսբուքում հրապարակումով դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ Տավուշի մարզպետի աշխատակազմին, որտեղ մտահոգություն է հայտնել Բարեկամավանում խոտհունձը ձախողելու վերաբերյալ: Նա գրել է. «Արդեն երրորդ տարին անընդմեջ մեր սահմանապահ Բարեկամավան գյուղը կանգնում է նույն աղետի առաջ՝ խոտհունձի տապալում: Այս տարի նույնպես ամբողջ խոտը վառվել-փչացել է: Գյուղում կատաստրոֆիկ տեխնիկայի պակաս կա, իսկ տեղական ու բարձրագույն իշխանությունների կողմից՝ բացարձակ անպատասխանատվություն եւ անտարբերություն: Տ-պավորություն է, որ պատասխանատուներին բացարձակ չի հետաքրքրում սահմանամերձ գյուղի ճակատագիրը: Ամեն մի պաշտոնյա պետք է հասկանա այս պարզ շղթան: Չկա տեխնիկա եւ կազմակերպվածություն: Չկա խոտ: Գյուղացին չի կարողանում պահել անասունին: Ընտանիքի միակ եկամտի աղբյուրը վերանում է: Մարդիկ ստիպված թողնում են իրենց տներն ու հեռանում գյուղից: Մենք ապրում ենք սահմանին: Բարեկամավանի դատարկվելը հարված է հենց երկրի անվտանգությանը: Ես արդեն 3 տարի է՝ փորձում եմ ձայնս հասցնել վերեւներին: Նամակներ, դիմումներ, զանգեր՝ ի պատասխան կամ լռություն է, կամ դատարկ ձեւական ձեւակերպումներ: Էլ որքա՞ն պիտի սահմանամերձ գյուղերը գոյատեւեն ոչ թե պետության աջակցության շնորհիվ, այլ դրան հակառակ: Դիմում եմ լրատվամիջոցներին, իրավապաշտպաններին եւ բոլոր մտահոգ քաղաքացիներին. օգնե՛ք բարձրաձայնել այս խնդիրը, թույլ մի տվեք, որ այն լռության մատնվի: Եկե՛ք, նայե՛ք այն մարդկանց աչքերին, ումից խլում են հայրենի գյուղում ապրելու վերջին հույսը: Պարոնա՛յք պաշտոնյաներ, ժամանակն է աշխատելու, այլ ոչ թե սահմանի մասին հիշելու միայն ընտրությունից ընտրություն: Մեզ տեխնիկա է պետք, մեզ խնդրի լուծում է պետք հիմա, քանի դեռ գյուղն ամբողջությամբ չի դատարկվել»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋՈՀԵՐ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀԱՐՎԱԾՆԵՐ ԿԻԵՎԻՆ

Ռուսական ուժերը հուլիսի 2-ի գիշերը լայնածավալ հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարձակում են իրականացրել Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւի վրա, որի հետեւանքով, վերջին տվյալներով, զոհվել է առնվազն 13 մարդ, ավելի քան 30-ը տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել:

Կիեւի ռազմական վարչակազմի ղեկավար Տիմուր Տկաչենկոյի խոսքով՝ տուժածների թվում երեխաներ եւս կան: Նրա գնահատմամբ՝ ռուսական բանակը միտումնավոր հարվածներ է հասցրել բնակելի թաղամասերին եւ քաղաքացիական ենթակառուցվածքներին:

Հարվածների հետեւանքով քաղաքի տարբեր շրջաններում բռնկվել են հրդեհներ: Վնասվել են բնակելի շենքեր, ավտոմեքենաներ, ենթակառուցվածքներ, ինչպես նաեւ շտապօգնության կայան, որի աշխատակիցներից առնվազն մեկը ծանր վիրավորում է ստացել: Կրակը հասել է նաեւ քաղաքի կենտրոնական պողոտաներից մեկում գտնվող հյուրանոցին, որտեղ հրշեջները երկար ժամանակ պայքարել են հրդեհի դեմ:

Ուկրաինայի արտակարգ իրավիճակների պետական ծառայության տվյալներով՝ մինչ այժմ փրկվել է 34 մարդ, սակայն որոնողափրկարարական աշխատանքները շարունակվում են: Փրկարարները դեռ աշխատում են հարվածների հետեւանքով վնասված բազմահարկ շենքերում եւ մայրաքաղաքի հարավ-արեւելյան հատվածի բնակելի տներում:

Գիշերվա ընթացքում Կիեւի երկնքում տեսանելի են եղել հակաօդային պաշտպանության համակարգերի կրակահերթերը, իսկ քաղաքի տարբեր հատվածներում լսվել են անօդաչու թռչող սարքերի, թեւավոր եւ բալիստիկ հրթիռների պայթյունները: Օդային տագնապի պատճառով հազարավոր բնակիչներ ապաստանել են մետրոյի ստորգետնյա կայարաններում:

Ուկրաինայի ԱՄՆ-ում դեսպան Օլիա Ստեֆանիշինան X սոցիալական հարթակում գրել է, որ մայրաքաղաքի բնակիչներն անցկացրել են հերթական սարսափելի գիշերը՝ ապաստարաններում: Նրա խոսքով՝ մի շարք վարչական շրջաններում գրանցվել են հրդեհներ եւ քաղաքացիական ենթակառուցվածքների ու բնակելի շենքերի լայնածավալ ավերածություններ:

Սա Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ վերջին ավելի քան երկու շաբաթվա ընթացքում իրականացված առաջին խոշոր հրթիռային եւ անօդաչու հարձակումն է: Միաժամանակ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ հարվածներ է հասցրել ոչ միայն Կիեւին, այլեւ Ուկրաինայի կենտրոնական եւ արեւելյան հատվածներում գտնվող ռազմական օբյեկտներին ու էներգետիկ ենթակառուցվածքներին: Մոսկվան պնդում է, որ գործողությունները պատասխան են եղել վերջին շրջանում Ուկրաինայի կողմից Ռուսաստանի տարածքում՝ Մոսկվայից մինչեւ Սեւծովյան շրջաններ, էներգետիկ օբյեկտների դեմ իրականացված հարձակումներին:

Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին դեռ նախօրեին, Դուբլին կատարած այցը կիսատ թողնելով, հայտարարել էր, որ նոր հետախուզական տվյալներ են ստացվել, ըստ որոնց՝ Ռուսաստանը պատրաստվում է լայնածավալ հարձակման: Նա քաղաքացիներին կոչ էր արել առավել զգոն լինել եւ պաշտպանել իրենց ու ընտանիքի անդամներին՝ ընդգծելով, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը երկար ժամանակ է նախապատրաստել այս զանգվածային հարվածը:

Ռազմաճակատում ռուսական զորքերը վերջին օրերին առաջխաղացում են գրանցել արեւելյան ուղղությամբ՝ մտնելով Կոնստանտինովկա քաղաք, որը համարվում է Ուկրաինայի վերջին կարեւոր հենակետերից մեկը Դոնբասում: Եթե Ռուսաստանին հաջողվի լիովին վերահսկողություն հաստատել քաղաքի նկատմամբ, դա կարող է ճանապարհ բացել դեպի ամբողջ Դոնբասի գրավումը:

Չնայած առանձին տեղային առաջխաղացումներին, ցամաքային մարտերը շարունակում են հիմնականում մնալ դիրքային բնույթ կրող: Ներկայումս Ռուսաստանը վերահսկում է Ուկրաինայի տարածքի մոտ մեկ հինգերորդ մասը, որի մեծ մասը գրավվել է 2022 թվականի փետրվարին սկսված լայնածավալ ներխուժման առաջին ամիսներին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՅՈԹՈՐՅԱ ՍՈՒԳ

Վենեսուելայում մեկ շաբաթ առաջ տեղի ունեցած ավերիչ 7,2 եւ 7,5 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժերի հետեւանքով զոհերի թիվը հասել է 2295-ի: Երկրի ժամանակավոր նախագահ Դելսի Ռոդրիգեսը զոհերի հիշատակին յոթօրյա ազգային սուգ է հայտարարել: Պաշտոնական տվյալներով՝ ավելի քան 11 հազար մարդ վիրավորվել է, շուրջ 13 հազար մարդ մնացել է անօթեւան, իսկ ՄԱԿ-ի գնահատմամբ՝ մոտ 50 հազար մարդ դեռ համարվում է անհետ կորած: Ամենաշատը տուժել է Լա Գուաիրա քաղաքը, որտեղ շարունակվում են որոնողափրկարարական աշխատանքները, թեեւ փրկարարները նշում են, որ ողջ մնացածներ գտնելու հավանականությունը օրեցօր նվազում է: Այնուամենայնիվ, օրեր անց փլատակների տակից հաջողվել է կենդանի դուրս բերել երեք տարեկան երեխայի:

Աղետի հետեւանքով երկրում սրվել է նաեւ հումանիտար ճգնաժամը: Շատ բնակիչներ մնացել են առանց սննդի, ջրի եւ կացարանի, աճել են թալանի դեպքերը, իսկ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը զգուշացնում է վարակիչ հիվանդությունների տարածման վտանգի մասին: NASA-ի նախնական գնահատմամբ՝ երկրաշարժերը վնասել կամ ամբողջությամբ ավերել են շուրջ 58 870 շենք:

Ա. Վ.

● *Ըստ վիճակագրության՝ հանրապետությունում հուլիսի 1-2-ը հայտնաբերվել է 12 հետախուզվող, կամավոր ներկայացել է 3-ը:*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՀՈՒՍՈ ԱՌԱԳԱՍՏ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԸ

Ֆասթ Բանկի աջակցությամբ եւ «Բարդերի» ակումբի նախաձեռնությամբ օրերս մեկնարկել է «Հուսո առագաստ» հեղինակային երգի միջազգային փառատոնը: Երիտասարդական միջոցառումը մեկ հարկի տակ է համախմբել հեղինակային երգի կատարողների Հայաստանի տարբեր մարզերից:

«Բարդերի» ակումբի հիմնադիր, երգահան Վախթանգ Հարությունյանի խոսքով՝ մրցույթ-փառատոնը երիտասարդ ստեղծագործողներին ինքնադրսեւորվելու հնարավորություն է տալիս. «Ֆասթ Բանկի հետ համագործակցությունն արդեն հինգ տարի է: Այն կարեւոր աշխատանքը, որ մենք հիմա անում ենք շնորհիվ Ֆասթ Բանկի, հնարավորություն է տալիս երիտասարդներին ինտեգրվելու, հնարավորություն է տալիս երիտասարդներին խրախուսելու եւ նրանց բեմական կյանքը զարգացնելու», - ասել է նա:

«Հուսո առագաստ» հեղինակային երգի 12-րդ միջազգային փառատոնի նախընտրական փուլին հաջորդելու է եռօրյա ստեղծագործական հավաք Սեւանում: Մրցույթի լավագույն տասնյակը «Բարդերի» ակումբի անդամների եւ արտասահմանից հրավիրված հյուրերի հետ կմասնակցի գալա-համերգին:

«Փառատոնն անցկացնում է բազմաթիվ համերգներ ողջ տարվա ընթացքում, եւ մենք ներգրավում ենք ադ երիտասարդներին այս համերգների մեջ, որպեսզի մեր ունկընդիրը մեր կողքին տեսնի երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին», - ասել է երգահան, մրցույթի ժյուրիի նախագահ Էդուարդ Զորիկյանը՝ ընդգծելով նոր սերնդին հարթակ տրամադրելու կարեւորությունը:

Ֆասթ Բանկը շարունակում է գործուն աջակցություն տրամադրել մշակութային եւ երիտասարդական նախաձեռնություններին՝ նպատակ ունենալով նպաստել ոլորտի զարգացմանը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

ԱՄՆ-ԻՐԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀԱՋՈՐԴԻՎ

Կատարի մայրաքաղաք Դոհայում ավարտվել է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ անուղղակի տեխնիկական բանակցությունների հերթական փուլը: Չնայած կողմերը չեն հայտարարել խաղաղության հասնելու ուղղությամբ զգալի առաջընթացի մասին, բանակցությունների ավարտին հաստատվել է, որ երկխոսությունը կշարունակվի:

Բանակցությունները տեղի են ունեցել այն բանից հետո, երբ վերջին օրերին ԱՄՆ-ն եւ Իրանը փոխադարձ ռազմական հարվածներ էին հասցրել միմյանց՝ Հորմուզի նեղուցում նավագնացության շուրջ առաջացած լարվածության ֆոնին:

Դոհայում Կատարի էմիր Թամիմ բին Համադ Ալ Թանիը հանդիպել է ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցիչ Սթիվ Ուիթքոֆին եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի փեսային՝ Ջարեդ Քուշներին՝ վերահաստատելով, որ Կատարը եւ Պակիստանը շարունակելու են միջնորդական ջանքերը Մերձավոր Արեւելքում հակամարտության կարգավորման ուղղությամբ:

Իրանական պատվիրակությունը գլխավորել է արտաքին գործերի նախարարի տեղակալ Քազեմ Ղարիբաբադիը: Միաժամանակ բանակցություններին չեն մասնակցել Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին ու խորհրդարանի նախագահ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը:

Ղարիբաբադիի խոսքով՝ անցկացվել է երկու առանձին հանդիպում: Առաջինի ընթացքում քննարկվել են ԱՄՆ-ի կողմից իր պարտավորությունների ենթադրյալ խախտումները, եւ կողմերը համաձայնել են ստեղծել մշտական հաղորդակցության ուղի՝ տարաձայնությունները կարգավորելու նպատակով: Երկրորդ հանդիպման ընթացքում քննարկվել է Իրանի սառեցված 6 միլիարդ դոլարի միջոցների ազատման հարցը: Նրա խոսքով՝ Կատարի իշխանությունների եւ Կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ համաձայնեցվել է, որ այդ միջոցների մի մասը կօգտագործվի Իրանի ներկայացրած կարիքներին համապատասխան անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման համար:

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը հայտնել է, որ բանակցություններում քննարկվել է նաեւ Հորմուզի նեղուցում նավագնացության անվտանգությունը: Աղբյուրների համաձայն՝ օրակարգում եղել են նաեւ Իրանի միջուկային ծրագիրը, սառեցված ակտիվները եւ Լիբանանում ստեղծված իրավիճակը: Միաժամանակ բեռնափոխադրումների տվյալները ցույց են տալիս, որ Հորմուզի նեղուցով առեւտրային նավերի երթեւեկությունը վերականգնվում է. հունիսի 22-28-ն ընկած շաբաթվա ընթացքում այն աճել է ավելի քան 50 տոկոսով:

Իրանի խորհրդարանի նախագահ Ղալիբաֆը նաեւ հայտարարել է, որ Միջազգային ատոմային էներգիայի գործակալությունի տեսուչները ներկայումս մուտք չունեն Ֆորդոյի, Նաթանզի եւ Իսֆահանի միջուկային օբյեկտներ, որոնք նախորդ տարվա 12-օրյա պատերազմի ընթացքում ենթարկվել էին ռմբակոծության: Նրա խոսքով՝ գործակալության ներկայացուցիչներն այժմ կարող են այցելել միայն Բուշեհրի ատոմակայան եւ Թեհրանի հետազոտական ռեակտոր, քանի որ Իրանի խորհրդարանն օրենք է ընդունել, որն արգելում է նման մուտքը:

Կատարի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մաջեդ ալ-Անսարին հայտարարել է, որ տեխնիկական բանակցությունների ընթացքում արձանագրվել է «դրական առաջընթաց»: Նրա խոսքով՝ ԱՄՆ-ի եւ Իրանի պատվիրակությունները համաձայնել են շարունակել բանակցությունները, իսկ հաջորդ հանդիպումը կկազմակերպվի Իրանի նախկին գերագույն առաջնորդ Ալի Խամենեիի հուղարկավորության արարողություններից հետո:

Վեցօրյա սգո եւ հուղարկավորության արարողությունները նախատեսված է սկսել շաբաթ օրը՝ Իրանում եւ Իրաքում: Արարողություններին մասնակցելու նպատակով Թեհրան է մեկնելու նաեւ Պակիստանի վարչապետ Շեհբազ Շարիֆը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ «ՍՏՈՊ» ԳՈՐԾԻՔՈՎ

Հայէկոնոմբանկի AEB Mobile/AEB Online համակարգերում ս.թ. հուլիսի 1-ից հասանելի է «Ստոպ» գործիքը, որը նախատեսված է առցանց տիրույթում ֆինանսական գործարքների կանխարգելման համար: Այն վերաբերում է ինչպես ֆիզիկական անձ հաճախորդներին, այնպես էլ անհատ ձեռնարկատերերին եւ իրավաբանական անձանց:

«Ստոպ» գործիքը հնարավորություն է տալիս արգելափակել բոլոր կամ առանձին բանկային ծառայությունների հասանելիությունն օգտատիրոջ կողմից:

«Ստոպ» գործիքով ծառայությունների հասանելիությունն արգելափակելու համար անհրաժեշտ է՝

մուտք գործել AEB Mobile,

գլխավոր էջում ընտրել «Ստոպ» գործիքը,

ընտրել բոլոր ծառայությունների արգելափակում կամ առանձին ծառայության արգելափակում,

հաստատել արգելափակումը:

«Ստոպ» գործիքը կիրառելի է հետեւյալ ծառայությունների նկատմամբ՝

դրամական փոխանցումներ եւ վճարումներ,

քարտային գործարքներ,

վարկային գործառնություններ,

ավանդներ,

այլ:

«Հաստատել» հրահանգից հետո ծառայությունը արգելափակվում անմիջապես՝ առավելագույնը 60 վայրկյանի ընթացքում: «Ստոպ» գործիքի գործարկումից հետո Դուք կստանաք հաստատման ծանուցում էլեկտրոնային փոստին:

Ծառայությունների ապաարգելափակման համար հարկավոր է դիմել Բանկի Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ: Ապաարգելափակումն իրականացվում է առավելագույնը 24 ժամվա ընթացքում:

«Ստոպ» գործիքի ներդրումը սահմանված է 24.02.2026թ. ՀՀ ԿԲ հաստատած «Սպառողի կողմից ֆինանսական ծառայությունների ինքնասահմանափակման գործիքների ներդրման նվազագույն պահանջները» 8/09 կանոնակարգով, որը ուժի մեջ է մտել 2026 թվականի հուլիսի 1-ից: Կանոնակարգը սահմանում է ֆինանսական կազմակերպության կողմից հեռավար եղանակով մատուցվող ծառայությունների նկատմամբ «ստոպ» գործիքների ներդրման, գործարկման եւ դադարեցման նվազագույն պահանջները:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԴԱՇԻՆՔ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿՈՂՄ Է ՔՎԵԱՐԿԵԼ

Ասիայում մշակութային ժառանգության դաշինքը տարածաշրջանային համագործակցության կարեւոր հարթակ է, որը միավորում է ասիական պետությունների ջանքերը մշակութային ժառանգության պահպանության, կառավարման, հանրահռչակման եւ մասնագիտական կարողությունների զարգացման ուղղություններով:

Դաշինքի ստեղծման նախաձեռնությունը մեկնարկել է 2021 թվականի հոկտեմբերի 27-ին: Հայաստանը նախաձեռնության հիմնադիր անդամ է Չինաստանի, Կամբոջիայի, Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության, Իրանի, Ղրղզստանի, Պակիստանի, Սիրիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Եմենի հետ միասին: Դաշինքի կանոնադրությունը հաստատվել եւ ուժի մեջ է մտել 2023 թվականի ապրիլի 25-ին: Այս մասին ասել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելով ««Ասիայում մշակութային ժառանգության դաշինքի» կանոնադրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը:

Դաշինքը համագործակցության հարթակ է, որի նպատակն է աջակցել մշակութային ժառանգության պահպանության եւ օգտագործման կարողությունների զարգացմանը, խթանել ժողովուրդների միջեւ կապերի խորացումն ու քաղաքակրթական արժեքների փոխանցումը:

Նախարարը տեղեկացրել է, որ ՀՀ Ազգային ժողովը 2025 թվականի հունվարի 22-ին վավերացրել է դաշինքի կանոնադրության սկզբնական տարբերակը: Կազմակերպության խորհրդի 2-րդ նիստի ընթացքում հաստատվել է կազմակերպության կանոնադրության փոփոխությունը, ըստ որի՝ փոփոխման է ենթարկվել կառույցի կարգավիճակը՝ վերածվելով միջազգային միջկառավարական կազմակերպության: Ուստի, անհրաժեշտություն է առաջացել վերահաստատելու Հայաստանի՝ դաշինքին անդամակցությունը:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ նախարարությունը դաշինքին ներկայացրել է դրամաշնորհային հայտեր, եւ Հայաստանն արդեն ստացել է շուրջ 32 մլն դրամի աջակցություն՝ «Մետաքսի ճանապարհի մոդելը տեղական դիտանկյունից. Թալինի եւ Դաշտադեմի մշակութային փոխկապակցվածության բացահայտում ու պահպանում» ծրագրի իրականացման համար: Ծրագիրն իրականացնելու է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը:

Հարցը քննարկվել է հանձնաժողովի՝ հուլիսի 1-ի արտահերթ նիստում: Դրական եզրակացություն ստացած օրենքի նախագիծը նախատեսվում է քննարկել հուլիսի 2-ին գումարվող ԱԺ արտահերթ նստաշրջանի ընթացքում:

ՄԱՀԱՑԵԼ Է

112 տարեկան հասակում մահացել է Հայոց ցեղասպանությունը վերապրած վերջին անձանցից մեկը՝ Մարի Վարդանյանը:

Ծնվելով 1914 թվականի օգոստոսի 17-ին պատմական Կիլիկիայի Այնթապ քաղաքում՝ Մերի Ուզքուշյանը (նրա օրիորդական ազգանունը) աշխարհ է եկել Հայոց ցեղասպանությանը նախորդող ժամանակահատվածում. Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության դեմ իրականացված այդ արշավանքը խլել է մոտ 1,5 միլիոն մարդու կյանք: Նա փոքր տարիքում վերապրել է ցեղասպանության սկզբնական շրջանը եւ իր հետ տարել այդ փորձառության հիշողությունը՝ապրելով ավելի քան մեկ դար եւ տեսնելով չորս սերունդ:

Նրա ընտանիքը խուսափել է տեղահանությունից մասամբ հորեղբոր որդու՝ բժիշկ Կարապետ Եսայանի հովանավորության շնորհիվ. վերջինիս ընտանիքն օգնել է Ուզքուշյաններին փախչել Հալեպ 1920-ականների սկզբին՝ թողնելով տունն ու գրեթե ամբողջ ունեցվածքը:

Նրա հայրը ջրաղացպան էր եւ զբաղվում էր ձավարի արտադրությամբ: Մարին մեծացել է՝խոսելով հայերեն, թուրքերեն եւ ավելի ուշ՝ արաբերեն, ինչպես նաեւ սովորել է հյուսել (կեռիկով), կարել եւ գործել այնթապյան ոճի գորգեր. արհեստ, որը հետագայում օգնել է նրան ապրուստ վաստակել Հալեպում: Տասնամյակներ անց նրա ձեռքի աշխատանքի նմուշները ցուցադրվել են Լիբանանի Անթիլիաս քաղաքում գտնվող Կիլիկիո Կաթողիկոսության թանգարանում:

1935 թվականին նա ամուսնացել է Հովհաննես Վարդանյանի հետ, ով նույնպես ծագումով Այնթափից էր եւ մասնագիտությամբ ջութակահար ու կոմպոզիտոր. վերջինս հանդես էր գալիս Հալեպի հայկական ռադիոյում եւ իր երաժշտական տաղանդի համար արժանացել էր Սիրիայի ազգային ճանաչման մեդալի: Նրանք միասին դաստիարակել են չորս որդի եւ երկու դուստր: 1965 թվականին ընտանիքը տեղափոխվել է Բեյրութ՝ որդիներին սիրիական բանակում պարտադիր զինվորական ծառայությունից զերծ պահելու նպատակով, իսկ չորս տարի անց՝ 1969 թվականին, Հովհաննեսը մահացել է՝Մարիին 55 տարեկանում թողնելով այրի: Նա այլեւս երբեք չի ամուսնացել:

ԼՈՒՐԵՐ

ՆՇԵԼ Է ՖԱՎՈՐԻՏԻՆ

UFC-ի կիսածանր (մինչեւ 93 կգ) եւ ծանր (մինչեւ 120 կգ) քաշային կարգերի նախկին չեմպիոն, ամերիկացի Ջոն Ջոնսը նշել է UFC-ի թեթեւ քաշային կարգի վարկանիշային աղյուսակի երկրորդ համար Արման Ծառուկյանի եւ նույն քաշային կարգում կազմակերպության նախկին չեմպիոն Իլիա Թոփուրիայի միջեւ հնարավոր մենամարտի ֆավորիտին, գրում է armsport-ը: «Դուք առանց այդ էլ գիտեք, որ Արմանը ցանկացած պահի կհաղթի Թոփուրիային: Ցանկացած պահի»,- նշել է Ջոնսը IBA Bare Knuckle մրցաշարի ժամանակ:

ՄԻՆՉԵՎ 10% IDCOIN

Երբեմն լավագույն որոշումները կայացվում են ոչ թե գրասենյակում կամ հանդիպումների սեղանի շուրջ, այլ ընդմիջման ընթացքում: Մի բաժակ սուրճ, համեղ ընդմիջում, գործընկերների հետ կարճ զրույց, նոր գաղափար կամ պարզապես մի քանի րոպե՝ աշխատանքային առօրյայից կտրվելու համար: Իսկ եթե այդ հաճելի պահերը նաեւ idcoin-ներ բերեն, օրը կարելի է իրոք հաջողված համարել:

2026թ. հուլիսի 1-ից մինչեւ օգոստոսի 31-ը ներառյալ՝ ամեն օր ժամը 12:00-ից 15:00-ն, «Լանչի՛ր եւ մինչեւ 10% idcoin ստացիր» արշավի շրջանակում մի շարք սրճարաններում, ռեստորաններում եւ բարերում Idram&IDBank հավելվածով QR վճարումներ կատարելիս կարող եք ստանալ մինչեւ 10% ակնթարթային idcoin:

Արշավի շրջանակում՝ 2026թ. հուլիսի 1-ից մինչեւ օգոստոսի 31-ը ներառյալ, մեկ օրացուցային ամսվա ընթացքում հնարավոր է ստանալ առավելագույնը հանրագումարային 10,000 idcoin (հարկումից հետո):

Որպես QR վճարման աղբյուր կարող եք ընտրել Idram&IDBank հավելվածին կցված բանկային հաշիվը, քարտը, Idram դրամապանակը, idplus բոնուսները կամ Rocket Line եւ Rocket Line 0%-ը:

Բացի այդ, արշավին մասնակցած այն օգտատերերը, որոնք բանկի հաճախորդ չեն եւ արշավի ընթացքում Idram&IDBank հավելվածի միջոցով կիրականացնեն սինքրոնացում ու կդառնան բանկի հաճախորդ, արշավի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կստանան 1000 idձoin (հարկումից հետո):

Ի վերջո, հաճելի անակնկալների համար միշտ չէ, որ հատուկ առիթ է պետք: Երբեմն բավական է պարզապես վճարել Idram&IDBank հավելվածով եւ ստանալ ձեր idձoin-ները:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից

Idbank.am | 010593333 *(Գ)*

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հուլիսի 4-ին՝ ժամը 15:00-ին, կկայանա «Կարմիր գլխարկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ է նշանակում ժամանակավոր, մշտական եւ հատուկ կացության կարգավիճակ, ո՞ւմ է տրվում եւ ի՞նչ ժամկետով:

Անի Կարապետյան, 44 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի եւ ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ՝ (ուսումը, աշխատանքի թույլտվության առկայությունը, ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը, ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, ազգությամբ հայ լինելը, օրենքով սահմանված այլ դեպքեր): Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչեւ 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ: Ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի կարգավիճակի ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝ ապացուցում է ՀՀ-ում ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով եւ մինչեւ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է ՀՀ-ում կամ ազգությամբ հայ է կամ ՀՀ-ում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն: Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Մշտական կացության քարտը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի մշտական կացության քարտի վավերականության ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ: Հատուկ կացության կարգավիճակ տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին:

Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաեւ ՀՀ-ում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: Հատուկ կացության կարգավիճակ տրվում է 10 տարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ:

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է Կյանքի խոսք եկեղեցին համարվում աղանդ, չէ՞ որ շատ մարդիկ վկայում են իրենց կյանքում եղած հրաշքի մասին:

Ամալյա Գրիգորյան, 51 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. *Սկիզբը՝նախորդ համարում*

Քրիստոսի եկեղեցու ճշմարտությունը առաքելական դավանանքի մեջ է: Եկեղեցին հաստատեց Քրիստոս եւ Իր առաքյալները շարունակեցին այդ նվիրական առաքելությունը: «Կյանքի խոսք» աղանդը ոչ մի կապ չունի առաքյալների հետ: Ո՞վ է ստեղծել այդ «եկեղեցին»... Քրիստոսի առաքյալնե՞րը. բնականաբար՝ ոչ, սովորական մարդի՞կ. այո: Եթե այդպես է, եկեք վաղը ես եւ դուք մի եկեղեցի «բացենք», նույն Աստվածաշնչով, դավանանքով, Ս. Երրորդության «հավատքով», ի՞նչն է մեզ խանգարում նման եկեղեցի բացել: Ասել, որ ես Ս. Երրորդությունն ընդունում եմ, Աստվածաշունչը՝կարդում, աղոթում եւ այլն, դեռ բավական չէ, իսկ ինչպե՞ս ենք փրկվելու, Քրիստոսին իբրեւ Փրկիչ ընդունելո՞վ, բնականբար՝ոչ. դա շատ միամիտ է ասված: Իսկ ո՞ւր մնացին հաղորդությունը, ապաշխարությունը, խոստովանությունը, եկեղեցու յոթ խորհուրդները, որոնք հենց Քրիստոս է հաստատել, Սրբազան ավանդույթը, որ Պողոս առաքյալը պատգամում է սրբորեն պահել: Պարզապես աղանդներում հեշտ է փրկվել. «ընդունիր Քրիստոսին քեզ փրկիչ, դու արդեն սուրբ ես» Սա է, որ հակասում է Ավետարանին, իսկ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին ավելի դժվար ճանապարհ է առաջարկում (անկեղծ ու գիտակցված ապաշխարություն, զղջում, խոստովանություն, պահեցողություն, աղոթք եւ այս ամենով լուսավորված ու իմաստավորված քրիստոնեական կենցաղ), որը գուցե ամեն մարդու համար չէ, «կանչվածները շատ են, բայց ընտրյալները սակավ» (Մատթ. 20:16):

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ամպ հիշեցնող թիթեռների հսկայական կուտակում Ալթայի Հանրապետությունում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14 + 24 + 28
Կոտայքի լեռներ	+ 9 + 13 + 24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 15 + 18 + 30 + 33
Գեղարքունիք	+ 9 + 13 + 22 + 26
Լոռի	+ 9 + 14 + 25 + 29
Տավուշ	+ 10 + 14 + 27 + 30
Արագածոտնի լեռներ	+ 8 + 12 + 24 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 19 + 30 + 34

Արարատ	+ 15 + 19 + 32 + 35
Արմավիր	+ 17 + 20 + 33 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 13 + 24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 20 + 33 + 36
Սյունիքի լեռներ	+ 8 + 12 + 19 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 + 24 + 28
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 + 31 + 34
Երեւան	+ 18 + 20 + 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **02.07.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*